Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 2

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի նիստի

24.08.2015թ.
ժ. 11.00

ք. Երևան
ՀՀ ԱՍՀՆ նիստերի դահլիճ

Մասնակցում էին՝
Կոմիտեի նախագահ՝ Ա. Ասատրյանը
Կոմիտեի անդամներ՝ Ա. Պետրոսյանը, Շ. Հարությունյանը, Ֆ. Բերիկյանը, Ջ. Բաղդասարյանը, Ս. Տերտերյանը
Բացակայում էին՝ Ա. Գրիգորյանը, Թ. Ավետիսյանը, Գ. Իսրայելյանը

Հրավիրված էին՝ Դ. Հակոբյանը, Ն. Սարգսյանը, Ա. Գրիգորյանը, Է. Գևորգյանը, Ա. Մանվելյանը, Ա. Կեսոյանը, Գ. Գյունաշյանը, Կ. Սարգսյանը, Ա. Սարգսյանը, Ա. Սողոյանը, Ա. Գևորգյանը, Ձ. Մարգարյանը, Շ. Կարապետյանը, Գ. Հայրապետյանը, Ա. Բարսեղյանը, Ա. Խաչատրյանը

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, կոմիտեի նախագահ Ա.Ասատրյանը նիստի սկզբում հղում անելով օրակարգում ընդգրկված և աուդիտի բաժնի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում կազմված հաշվետվություններին՝ հստակեցրեց մասնակիցների կողմից դրանց վերաբերյալ ունեցած առաջարկությունները: Մասնակիցների կողմից օրակարգի վերաբերյալ առաջարկություններ չհնչեցին, որի արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ** հաստատել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 2015 թվականի օգոստոսի 24-ի նիստի հետևյալ օրակարգը:

Ներք/28769-15
19 09 15

ՕՐԱԿԱՐԳ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 24.08.2015թ. նիստի

1. Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 07 խմբի 01 դասի <05. Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ> ծրագրի մասով իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

2. Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 04 խմբի, 01 դասի <02. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ> ծրագրի մասով ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի <Պետական նպաստների մասին> ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին> թիվ 145-Ն որոշմամբ հաստատված Հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին առաջարկություններ> իրականացված ներքին աուդիտիմիջանկյալ հաշվետվության արդյունքների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

1. Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 07 խմբի 01 դասի «05. Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի մասով իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին:

(Ա. Ասատրյան, Ա. Պետրոսյան, Ս. Հարությունյան, Ջ. Բաղդասարյան, Ձ. Մարգարյան, Ա. Մանվելյան, Ա. Մինասյան)

Ս. Տերտերյանը ներկայացնելով օրակարգի 1-ին հարցը անդրադարձավ Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 07 խմբի 01 դասի <05. Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ> ծրագրի մասով իրականացված ներքին աուդիտի արդյունքում արձանագրված թերություններին և ներկայացված առաջարկություններին:

Անդրադառնալով վերը նշված ծրագրերի մասով իրականացված ներքին աուդիտի արդյունքում արձանագրված թերություններին, Ս. Տերտերյանը նշեց, որ ծրագրով նախատեսված ՀՀ ԱՍՀՆ և <Հանս Քրիստիան Կոֆոեդ> Հ/Կ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերի (այսուհետ՝ Պայմանագիր) որոշ կետերի պահանջները չեն իրականացվել, մասնավորապես՝ Կազմակերպությունում խնամվելու նպատակով Պայմանագրով սահմանված 3 ամսվա ժամկետը չի համապատասխանում ուսումնասիրված ժամանակաշրջանում գործող <Սոցիալական աջակցության մասին> ՀՀ օրենքի 12-րդ

հոդվածի 2-րդ կետի պահանջին, որն է՝ <Ժամանակավոր օթևանը տրամադրվում է մինչև 60 օր տևողությամբ>:

Նիստի ընթացքում քննարկվեց, որ հասարակական կազմակերպության հետ կնքվելիք պայմանագրում անհրաժեշտ է հստակեցնել Կազմակերպությունում գտնվող շահառուների բնակվելու օրերի քանակը:

Շարունակելով Ս. Տերտերյանը ներկայացրեց Պայմանագրի <թիվ 2 Հավելված>-ի ուսումնասիրության արդյունքները, համաձայն որի Կազմակերպության կողմից հայտ պահանջագրերով ներկայացված <Էներգետիկ ծառայություններ>-ի գծով ծախսը 2014 թվականի ընթացքում կազմել էր 7200.0 հազ. դրամ, սակայն ներքին աուդիտի արդյունքներով պարզվեց, որ Կազմակերպության <Էներգետիկ ծառայություններ>-ի գծով փաստացի ծախսը կազմել էր 4301.2 հազ. դրամ, այսինքն, Կազմակերպության կողմից 2898.8 հազ. դրամ գումարի չափով ավել ծախս է ներկայացվել Նախարարությանը: Ամփոփելով Տերտերյանն փաստեց, որ <Էներգետիկ ծառայություններ>-ի գծով ավել ներկայացված 2898.8 հազ. դրամ գումարը ենթակա է վերականգնման՝ ՀՀ պետական բյուջե:

Նախարարը Կազմակերպության նախագահ Ձ.Մարգարյանից և հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ա. Կեսոյանից պահանջեց պարզաբանումներ վերը նշված խնդիրների վերաբերյալ:

Ձ. Մարգարյանը պարզաբանեց, որ աուդիտի ընթացքում արձանագրված խախտումն ուղղակի կարելի է անվանել կանխավճար, քանի որ մինչև Կազմակերպության հետ պայմանագիր կնքելը, հաջորդ տարվա դեկտեմբեր ամսվա համար նախատեսված էլեկտրաէներգիայի գումարը փոխանցվում է տարևերջին՝ հետագայում խնդիրներ չառաջանալու նպատակով:

Ա. Մանվելյանը նշեց, որ յուրաքանչյուր տարվա գումարը մարվում է տարվա ընթացքում: Նա նաև նշեց, որ ՊՈԱԿ-ների դեպքում այդ գումարը կարելի է հստակ փոխանցել, իսկ Հ/Կ-ների պարագայում վերը նշված փոխանցումն ավելի ռիսկային է՝ հաջորդ տարի այդ Հ/Կ-ի հետ պայմանագիր չկնքվելու կամ այլ հնարավոր բարդությունների առաջանալու պատճառով:

Ս. Տերտերյանը անդրադառնալով իրականացված ուսումնասիրությունների արդյունքներին, նշեց, որ անօթևաններին տրամադրված բնակելի մակերեսն որոշ դեպքերում պակաս է մեկ անձի հաշվարկով սահմանված 5 քառ. մետրից: Օրինակ՝ կացարանի թիվ 11 սենյակում գիշերում են թվով 16 անօթևաններ, այն պարագայում, երբ սենյակի ընդհանուր բնակելի մակերեսը կազմում է 63,8 քառ. մետր, այսինքն՝ յուրաքանչյուր բնակչի համար տրամադրված է 3,9 քառ. մետր:

Ձ. Մարգարյանը պարզաբանեց, որ աուդիտի իրականացման ընթացքում Կազմակերպության սենյակներից մեկում ախտահանման աշխատանքներ կատարելու պատճառով շահառուներին ժամանակավորապես տրամադրված տարածքը փոքր էր:

Ս. Տերտերյանը անդրադարձավ նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հունվարի 31-ի <Հանս Քրիստիան Կոֆոեդ բարեգործական հիմնադրամի անօթևանների ժամանակավոր կացարանում բնակվող անօթևաններին սոցիալ վերականգնողական ծառայություններ մատուցելու նպատակով տրամադրվող բնակելի տարածքի սանիտարական և կոմունալ հարմարությունների անհրաժեշտ պայմանները, հաստիքային միավորները, մաքրիչ նյութերի, հիգիենիկ պարագաների և սննդամթերքի անվանացանկերը, ինչպես նաև օրինակելի ճաշացանկ սահմանելու մասին> թիվ 13-Ա/1 հրամանով հաստատված թիվ 1 Հավելվածի 2-րդ կետի պահանջին, այն է՝ <2. Կացարանի յուրաքանչյուր սպասարկվող պետք է ապահովված լինի առանձին մահճակալով, մեկ փոքր պահարանով, իսկ յուրաքանչյուր ննջասենյակ՝ հանդերձապահարանով (յուրաքանչյուր չորս անձի հաշվարկով՝ մեկ հատ)>:

Ըստ Տերտերյանի Կազմակերպության ննջասենյակներն ապահովված չէին վերը նշված չափորոշիչով սահմանված՝ փոքր պահարաններով և հանդերձապահարաններով:

Զ. Մարգարյանը պարզաբանեց, որ Կազմակերպության պակաս գույքը համալրվել է և ներկայումս այն բավարարում է շահառուների պահանջներին և համապատասխանում է սահմանված չափորոշիչներին:

Ա. Ասատրյանը նշեց, որ առաջիկայում գործելու է ընթացակարգ, որով ծառայություններ մատուցող կազմակերպություններին տրվելու է հավաստագիր, և այդ հավաստագրերը ստանալու համար Կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության կողմից սահմանած չափորոշիչներին, հակառակ պարագայում վերջիններիս հետ պայմանագրեր չեն կնքվի:

Ս. Տերտերյանը անդրադարձավ նաև ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի <Ժամանակավոր օթևանի տրամադրման կարգը և պայմանները հաստատելու մասին> թիվ 614-Ն որոշմամբ հաստատված Հավելվածի 8-րդ կետով սահմանված պահանջի (<8. Հաճախորդին օթևան տրամադրվում է նրա փաստացի գտնվելու վայրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության որոշման հիման վրա>) խախտմանը:

Խնդրի կապակցությամբ Զ. Մարգարյանը հայտնեց, որ որոշ անօթևաններ Կազմակերպություն են ընդունվում վերջինիս կողմից ձեռնարկած միջոցառումների, ՀՀ ոստիկանության, թաղապետարանի կամ ԱԻՆ-ի միջոցով, և որպես կանոն իրենց մոտ չեն ունենում համապատասխան փաստաթղթեր (անձնագիր և այլն), որն անհնար է դարձնում ՍԾՏԳ-ների որոշման հիման վրա Կազմակերպություններում ընդունվելու գործընթացը:

Ձ. Մարգարյանը նշեց նաև, որ որոշ դեպքերում Կազմակերպությունում ընդգրկվում են նաև հիվանդանոցներից, միաժամանակ՝ շնորհակալություն հայտնելով նման շահառուների բուժումն անվճար իրականացնելու համար:

Ա.Ասատրյանը կարևորեց նաև Կազմակերպության սոցիալական աշխատողների կողմից դեպքի վարում իրականացնելու փաստը, շահառուների հետ տարվող աշխատանքներն ու ակնկալվող արդյունքը:

Ս. Տերտերյանն անդրադարձավ նաև ստուգման արդյունքում ի հայտ եկած ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի <Ժամանակավոր օթևանի տրամադրման կարգը և պայմանները հաստատելու մասին> թիվ 614-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետով սահմանված պահանջի խախտմանը, մասնավորապես՝ օրական 3 անգամ սնունդ հատկացնելու խնդրին:

Այնուհետև Ձ. Մարգարյանը ներկայացրեց, Կազմակերպության շահառուներին օրական երկու անգամ՝ առավոտյան ժամը 10:00-ին և երեկոյան 18:00-ին սննդով ապահովելու փաստը, և հավելեց, որ այն իրականացվում է նաև բարեգործների կողմից տրված օգնությունների միջոցով:

Բարձրացված հարցի շուրջ ծավալված քննարկման ժամանակ նախարարի առաջին տեղակալ Ա. Պետրոսյանն առաջարկեց կազմակերպության շահառուներին օրը 3 անգամ սնունդ տրամադրել:

Ա. Ասատրյանը պարզաբանեց, որ կացարանը խնամքի հաստատություն չէ և ունի այլ առաքելություն, ուստի երկու անգամյա սնունդը պայմանավորված է շահառուների զբաղվածության ապահովմամբ:

Շ. Հարությունյանն առաջարկեց հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչությանը <Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ> ՊՈԱԿ-ի հետ համատեղ իրականացնել անօթևանների ժամանակավոր կացարանում բնակվող անձանց կարիքների գնահատում և դրանց համապատասխան ծառայությունների նկարագրերի սահմանում:

Ա. Մինասյանը նշեց, որ նմանատիպ դեպքերում Ռուսաստանի Դաշնությունում գործում է <սոցիալական հյուրանոց> հասկացություն, որն որպես դրական օրինակ կարող է ծառայել նաև կազմակերպության համար:

Ս. Տերտերյանն անդրադարձավ նաև Կազմակերպության հաստիքային միավորներին, առաջարկելով՝ հաստիքային միավորների ցուցանիշները վերանայել, հաշվի առնելով փաստացի հաստիքային միավորների ցուցանիշները:

Ջ. Բաղդասարյանը ներկայացրեց, որ իրականացվել են քննարկումներ և ներկայացվել կարծիք այն մասին, որ <Ձորակ> հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն> ՊՈԱԿ-ում նախատեսվի անօթևան անձանց համար ընդունիչ-բաշխիչ կայան, քանի որ նրանց մեծ մասը հոգեկան խնդիրներ

ունեցող անձինք են, որից հետո նրանց ուղորդել կամ <Հանս Քրիստիան Կոֆոեդ> Հ/Կ կամ <Ձորակ> հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն> ՊՈԱԿ:

Հարցի քննարկման ընթացքում արձանագրվեց , որ անհրաժեշտ է.

- Մեկ անգամ ևս այցելել Կազմակերպություն՝ վերը նշված խախտումների շտկման փաստերը ուսումնասիրելու և արձանագրելու նպատակով:
- Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչությանը Կազմակեպության հետ համատեղ անդրադառնալ վերջինիս կողմից մատուցվող ծառայության նկարագրին, համապատասխանեցնել շահառուների սպասարկման 90 օրը Պայմանգրի պահանջներին և շահառուների կարիքներին համապատասխան անհրաժեշտ ծառայությունների վերաբերյալ ներկայացնել առարկայական, ամբողջական առաջարկություն:
- Ներկայացնել առաջարկություն Կազմակերպության շահառուների սննդի տրամադրման հարցի կարգավորման վերաբերյալ:
- Վերանայել Կազմակերպության հաստիքացուցակը՝ արտացոլելով կնքվելիք պայմանագրի ծառայությունների նկարագրում:
- <Տարեցների և հաշմանդամների հաշվառման> տեղեկատվական համակարգում առկա հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ստանալու վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ:

2. Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 04 խմբի, 01 դասի <02. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ> ծրագրի մասով ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի <Պետական նպաստների մասին> ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին> թիվ 145-Ն որոշմամբ հաստատված Հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին առաջարկություններ> իրականացված ներքին աուդիտի միջանկյալ հաշվետվության արդյունքների մասին:

(Ա. Ասատրյան, Ա. Պետրոսյան, Ս. Հարությունյան, Ա. Գրիգորյան, Ա. Մինասյան)

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ նախարարը հարցադրեց, թե ներքին աուդիտի բաժնի պետի կողմից քանի տարածքային գործակալություններում են ուսումնասիրություններ կատարվել, հարցադրմանն ի պատասխան Ս. Տերտերյանը նշեց, որ 32 սոցիալական տարածքային գործակալություններում կատարվել են համապատասխան ուսումասիրություներ:

Այնուհետև Ս. Տերտերյանը ներկայացնելով առաջարկեց, ընտանիքների անապահովության գնահատման ժամանակ օգտագործվող բնութագրիչները դասել երկու դասի՝

- ուղղակի ազդեցություն ունեցող բնութագրիչներ

- անուղղակի ազդեցություն ունեցող բնութագրիչներ

Նա մասնավորապես նշեց, որ ներկայացված առաջարկությունը կնպաստի <նպաստ> համակարգում ընդգրկված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հստակ վերլուծելուն:

Ներկայացված առաջարկության շուրջ քննարկումների արդյունքում որոշում ընդունվեց ի գիտություն ընդունել ներկայացված առաջարկությունը և տվյալ հարցին անդրադառնալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 25.12.2014թ. թիվ 144-Ա/1 հրամանով ստեղծված աշխատանքային խմբի քննարկումների շրջանակներում:

<Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ> ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Սարգսյանը նշեց, որ ուղղակի և անուղղակի գործոնները համակարգի վրա ուղղակի ազդեցություն են ունենում և առաջարկեց, որ անուղղակի գործոնը անհրաժեշտ է մտցնել մեթոդաբանության մեջ: Նախարարը կարևորեց վերջինիս կողմից ներկայացված առաջարկությունը և նշեց, որ անհրաժեշտ է հստակ դասակարգել և համապատասխան մեթոդաբանությամբ անդրադարձ կատարել անուղղակի գործոնին:

Շարունակելով Ս. Տերտերյանը անդրադարձավ անապահով ընտանիքների բացակա անդամներին:

Ս. Տերտերյանը ներկայացրեց, որ ներքին աուդիտի բաժնի կողմից ներկայացրած գրության հիման վրա <Նորք> ՏՎԿ> ՓԲԸ-ի կողմից իրականացվել է ընտանեկան նպաստ համակարգում ընդգրկված շահառուների տվյալների համադրման աշխատանքներ, մասնավորապես ընտանիքի յուրաքանչյուր անդամի եկամտի, բնակչության պետական ռեգիստրում հաշվառման, սոցիալական խմբի, զբաղվածության և այլն: Ներկայացվեց նաև, որ ՀՀ կառավարության թիվ 145-Ն որոշման Հավելված 2-ի 4-րդ կետի պահանջներին համապատասխան <Նպաստ> տեղեկատվական համակարգում հստակ նշվում են ընտանիքի <հարգելի> բացակա անդամները, իսկ մնացած դեպքերում բացակա անձանց վերաբերյալ որոշակի պայմաններ սահմանված չեն: Ս. Տերտերյանը առաջարկեց սույն հարցը դիտել <Բնակչության պետական ռեգիստրի մասին> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի <Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին> թիվ 1231-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում, համաձայն որի <Մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս անձը պարտավոր է յոթնօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել այն համայնքի տեղական ռեգիստրին, որտեղ գտնվում է նրա նոր կացարանը:>

Շ. Հարությունյանը շեշտեց, որ Վերլուծության և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի կողմից նախորդ տարի իրականացվել են «բացակա» անձանց հետ կապված ուսումնասիրություններ և արձանագրվել նմանատիպ երևույթներ, որոնցում բացակա անձինք ունեն բավականին մեծ եկամուտներ և որպեսզի նրանց եկամուտները այս կամ այն կերպ ազդեցություն չունենան ընտանիքի անապահովության միավորի վրա, այդ իսկ պատճառով նրանց ընտանքի կազմում նշում են «բացակա»:

Ա. Ասատրյանը նշեց, որ անհրաժեշտ է ուսումնասիրել նշված խնդրի զարգացման դինամիկան 2011թ., 2012թ., 2013թ. և 2014 թթ. դրությամբ: Նշեց նաև, որ <Նորք> ՏՎԿ> ՓԲԸ-ի կողմից տրամադրված համադրման տվյալների համաձայն ընտանիքի բացակա անդամների եկամուտները բավականին մեծ են և հնարավոր է, որ այդ պատճառով նրանց <նպաստ> տեղեկատվական համակարգում հաշվառում են որպես ընտանիքի <բացակա> անդամ, քանի որ նրանց եկամուտները համակարգ մուտքագրելիս ընտանիքի անապահովության միավորը սահմանային միավորից ցածր էր լինելու:

Ըստ ներկայացված տեղեկատվության ԱԳՀ-ում հաշվառված ընտանիքներից բացակա անդամների թիվը կազմում է 52033 մարդ, որոնցից 25424 անձանց ընտանիքներին անապահովության սահմանային միավորը գտնվում է 30.00-ից բարձր միավորների տիրույթում: ԱԳՀ-ում հաշվառված բացակա անդամների թիվը, որոնք 2014-2015 թթ. համար ունեցել են աշխատանքային պայմանագրեր, կազմում է 3180 անձ, որոնցից 1199 անձանց ընտանիքների անապահովության սահմանային միավորը 30.00-ից մինչև 32.00 միավորների տիրույթում է:

Նախարարը շեշտեց, որ ներկայացված տվյալները ռիսկային են, իսկ թվերը՝ խնդրահարույց:

Ա. Պետրոսյանը հավելեց, որ ընտանիքների անապահովության համակարգում հաշվառելիս ընտանիքի <բացակա> անդամների տվյալները <նպաստ> համակարգ մուտքագրելիս կարող է ընտանիքին ոչ միայն զրկել ընտանեկան նպաստից, այլ նաև նպաստել ընտանիքի անապահովության գնահատման միավորի կտրուկ բարձրացմանը, եթե ընտանիքի <բացակա> անդամը 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ է:

Ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվեց արձանագրված առաջարկության 1.3 կետը, որը վերաբերում էր ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման Հավելված N 3-ի 10-րդ կետին՝ միևնույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) ընտանիքների առանձին տնտեսություն վարելու հանգամանքին (առանձին մուտքեր, առանձին ջրաչափեր, առանձին էլեկտրական հաշվիչներ կամ առանձին տնտեսություն վարելու նմանատիպ այլ հանգամանքներ):

Այնուհետև ներկայացվեց հաշվետվության 1.4 կետը, որն անդրադառնում է ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման Հավելված N 3-ի 15-19-րդ կետերով սահմանված բնութագրիչների (ավտոմեքենայի առկայություն և տեխզննման հանգամանք, ձեռնակատիրությամբ զբաղվելու հանգամանք, անշարժ գույքի սեփականության իրավունք ձեռք բերելու հանգամանք, ապրանքների ներմուծման կամ արտահանման համար մաքսային մուծումներ կատարելու հանգամանք, ամառային ամիսների ընթացքում էլեկտրաէներգիայի՝ սահմանված չափաքանակից ավելի սպառած լինելու հանգամանք), խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկության և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրության առկայության դեպքում, չկիրառմանը:

Ս. Տերտերյանը առաջարկեց վերը նշված 15-19-րդ կետերով սահմանված կարգով խորհրդի ներկայացրած առաջարկությունների <պատշաճ հիմնավորված առաջարկությունը> բառերը հանել և փոխարենը մշակել հստակ չափորոշիչներ:

Այնուհետև Ս. Տերտերյանը անդրադարձավ նպաստառու ընտանիքների էլեկտրական հաշվիչների բաժանորդային համարները տեղեկատվական համակարգ մուտքագրելուն: Նպաստառու ընտանիքների համար ամառային ամիսներին օրենսդրությամբ նախատեսված է էլեկտրաէներգիայի ծախսի սահմանափակում, որի չափաքանակը պարզվում է հաշվիչի բաժանորդային համարի միջոցով՝ համապատասխան տեղեկատվությունների համադրությամբ: Արդյունքում՝ այն ընտանիքները, որոնց հաշվիչի բաժանորդային համարները մուտքագրված չեն, գտնվում են <արտոնյալ> վիճակում՝ շրջանցելով օրենսդրության համապատասխան պահանջի կատարումից, ինչը ստեղծում է սոցիալապես անհավասար իրավիճակ այն ընտանիքների նկատմամբ, որոնց դեպքում հաշվիչի բաժանորդային համարները մուտքագրված են:

Տերտերյանը ներկայացրեց նաև վիճակագրական տեղեկատվություն, որ 2014 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ <Նորք> ՏՎԿ> ՓԲԸ-ում ԱԳՀ համակարգում հաշվառված են 104931 ընտանիքներ:

1. Համադրվել են՝

   Էլեկտրական հաշվիչի համարով համադրվել է 95797 նպաստառու ընտանիքների տվյալները, որից՝

   - միայն էլեկտրական հաշվիչի համարով տվյալների համադրվել է 29211 նպաստառու ընտանիք,
   - էլեկտրական հաշվիչի համարով, բաժանորդի անուն ազգանունով, անձնագրի սերիայով, բնակության հասցեով համադրվել է 66586 նպաստառու ընտանիք,

2. Չեն համադրվել

   Ոչ մի տեսակի տվյալներով չեն համադրվել 9134 նպաստառու ընտանիքների տվյալները, որից՝

   - 3882 նպաստառու ընտանիքների էլեկտրական հաշվիչի տվյալները դատարկ են:

Ս. Տերտերյանը նշեց նաև, որ չի գործում <սոցիալական բանկ> տեղեկատվական համակարգը, որն անհրաժեշտ է ՍԾՏԳ-ներին իրենց գործառույթների իրականացման համար, քանի որ վերջինիս չաշխատելը բարդացնում է գործակալությունների աշխատանքը:

<Նորք> ՏՎԿ> ՓԲԸ-ի տնօրեն Կ.Սարգսյանը կարևորեց, որ <սոցիալական բանկ>-ը իրականում գործակալությունների գործունեության իրականացման համար անհրաժեշտ է, սակայն ծրագրի հստակ չաշխատելու պատճառով վերջինիս գործածությունը ժամանակավորապես դադարեցվել է:

Նախարարն անդրադարձավ այն հարցին, որ դեռևս նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության, <Նորք> ՏՎԿ> ՓԲԸ-ի և

սոցիալական աջակցության տարածքային մարմինների միջև համադրման ցուցակների տրամադրումն իրականացվում է թղթային տարբերակով:

Ի պատասխան հարցադրմանը Ա. Մինասյանը պարզաբանեց, որ տեղեկատվության փոխանակման գործընթացն ամրագրված է ՀՀ կառավարության թիվ 145-Ն որոշմամբ, որում ոչ մի կերպ չի նշում տեղեկատվության փոխանակման թղթային տարբերակը:

Այնուհետև Ս. Տերտերյանը անդրադարձավ «Նպաստ» և «Մանուկ» տեղեկատվական համակարգերի համադրումների արդյունքում ի հայտ եկած ընտանեկան նպաստ համակարգում ընդգրկված երեխայի նաև մանկատանը հաշվառվելու խնդրին՝ մեջբերելով .

- <ԱԳՀ>-ում հաշվառված է՝ որպես նպաստառու, թվով 33 մանկատան երեխաներ, որոնցից՝ 12-ը ոչ պետական մանկատան երեխաներ են, իսկ 21-ը պետական մանկատան,
- Թվով 33 նպաստառուներից՝ թվով 29-ը ստանում են ընտանեկան նպաստ, իսկ 4-ը սոցիալական նպաստ (ընտանեկան նպաստի նպաստառուների մասով հարց է առաջանում, եթե երեխան ընտանիքի անդամ է, ապա ինչպես է նա հայտնվել մանկատանը),
- Թվով 33 նպաստառուներից՝ թվով 15-ը <ԱԳՀ>-ում գրանցված են <Ա> տառով, այսինքն, ներկա է ընտանիքում, թվով 9-ը <ԱԳՀ>-ում գրանցված են <Հ> տառով, այսինքն, հարգելի բացակա և թվով 9-ը <ԱԳՀ>-ում գրանցված են <Բ> տառով, այսինքն, <անհարգելի> բացակա:

Ս. Տերտերյանը ներկայացրեց նաև, որ Ներքին աուդիտի ընթացքում համադրվեցին <ԱԳՀ>-ում ընդգրկված անձանց տվյալները <Փյունիկ> տեղեկատվական շտեմարանում գրանցված անձանց տվյալների հետ, արդյունքում պարզվեց, որ 01.03.2015թ.-ի դրությամբ <ԱԳՀ>-ում ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացող, հաշմանդամության խումբ ունեցող, սակայն 01.03.2015թ.-ի դրությամբ <Փյունիկ> ՏԲ-ում առկա տվյալների հետ համադրման արդյունքում չնույնականացված անձանց քանակը կազմել է 1210 մարդ:

Վերը նշված անձանց ցուցակը ներքին աուդիտի բաժնի կողմից համապատասխան գրությամբ ներկայացվել է <ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության> գործակալությանը՝ պարզաբանում ստանալու և <Փյունիկ> ՏԲ-ում հաշվառելու նպատակով:

Ա. Սողոյանը պարզաբանեց, որ ՍԾՏՄ-ների կողմից նշված անձանց վերաբերյալ տարածքային ԲՍՓՀ-ներին տեղեկատվություն չի տրամադրվել, այդ իսկ պատճառով գործակալությունը ներքին աուդիտի բաժնին համապատասխան տեղեկատվությունը չի ներկայացրել:

Ա. Ասատրյանը շեշտեց, որ <Փյունիկ> համակարգի տվյալները պետք է բոլոր պարամետրերով համապատասխանեն տեղեկատվական համակարգի տվյալներին և անհրաժեշտ է վերականգնել հաշվառման մատյաններում առկա անձանց տվյալներով հաշմանդամությունը հաստատող չգտնված գործերը :

Հարցի քննարկման արդյունքում արձանագրվեց, որ անհրաժեշտ է .

- Ուսումնասիրել ընտանիքների «բացակա» անդամների դինամիկան 2011-2015թթ. ժամանակաշրջանում:
- Առանձնացնել հարակից բազաների և ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայի տվյալների համադրման արդյունքներից ընտանիքի <բացակա> անդամներին վերաբերվող հատվածը, ըստ անհրաժեշտության մշակել լրացուցիչ ուսումնասիրությունների կատարման ձևաչափ և դրանց արդյունքով ձևավորված տվյալները (ցուցակները) տրամադրել տիկին Շ. Հարությունյանին:
- ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման Հավելված N 3-ի 10-րդ կետի 2) ենթակետի <կամ առանձին տնտեսություն վարելու նմանատիպ այլ հանգամանքներ> բառերը հանել և խնդիրը կարգավորել տուն-այցերի մեթոդաբանությամբ:
- ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման Հավելված N 3-ի 10-րդ կետի 2) ենթակետի պահանջի մասով՝ կապված առանձին մուտքերի, առանձին ջրաչափերի, առանձին էլեկտրական հաշվիչների մասով տալ մասնագիտական պարզաբանում, այսինքն, վերը նշված երեք պայմանների առկայության դեպքում պետք է ճանաչվի առանձին տնտեսություն վարելու հանգամանքը, թե բավարար է պայմաններից որևէ մեկի առկայությունը:
- ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման Հավելված N 3-ի 10-րդ կետի 1) ենթակետի նախադասության վերջում ավելացնել <կամ> բառը, որպեսզի հասկացվի հետևյալը, այն է որ 1) կամ 2) ենթակետերից մեկի պահանջի առկայության դեպքում է որ պետք է լրացվեն առանձին սոցիալական անձնագրեր:
- ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման Հավելված N 8-ի 23-րդ կետում <ընտանիքի եկամուտներում> բառերից հետո ավելացնել հետևյալ բառերը՝ <բացառությամբ այն դեպքերի երբ աշխատավարձի փոփոխությունը պայմանավորված է նպաստառուի աշխատանքի հերթափոխային բնույթի, աշխատավարձի հավելավճարների կամ արձակուրդի հաշվարկի հետ>:
- Սոցիալական աշխատողների տնային այցելություն կատարելու մեթոդական ցուցումներում սահմանել ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների գնահատման վերաբերյալ հստակ չափորոշիչներ:
- ԱԳՀ-ում հաշվառված ընտանքիների՝ սոցիալական անձնագրի <Նպաստ> տեղեկատվական համակարգի համապատասխան դաշտում ապահովել էլեկտրական հաշվիչների աբոնենտային գրքույկների համարների պարտադիր մուտքագրումը:

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 25.12.2014թ. թիվ 144-Ա/1 հրամանով հաստատված աշխատանքային խմբի քննարկմանը ներկայացնել հարակից բազաների և ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայի տվյալների համադրման արդյունքների՝ ԱԳՆ համակարգում կիրառելու ընթացակարգը՝ հաշվի առնելով սոցիալական աջակցության խորհրդի դերը:
- 10 աշխատանքային օրվա ընթացքում <Սոցիալական բանկ>-ում առկա համակարգերի տեղեկատվության փոխանակման և շահագործման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ:
- Վերանայել նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության միջոցով <Նորք> ՏՎԿ> ՓԲԸ-ից տարածքային մարմիններին համադրված ցուցակների տրամադրման կարգը՝ դարձնելով ամբողջովին էլեկտրոնային:
- <Նպաստ> և <Փյունիկ> տեղեկատվական համակարգում առկա, սակայն համադրման արդյունքում չնույնականացված անձանց տվյալների ուսումանսիրությունները և արդյունքները ներկայացնել ներքին աուդիտի կոմիտեին:
- Կոմիտեի անդամներին ներկայացնել ուսումնասիրությունների արդյունքները ըստ տարածքային կենտրոնների:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵՑ

Ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյանին՝ արձանագրված խնդիրների լուծման նպատակով նախապատրաստել համապատասխան հրամանի նախագիծ:

Կոմիտեի նախագահ՝ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Կոմիտեի անդամներ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Շ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Ջ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ս. ՏԵՐՏԵՐՅԱՆ